մտեան կողմը». դիտելով քաղաքին համայնապատկերը կը գո-
չէ. «Ո՜ քաղաք Աստուծոյ, ո՛րքան քաղցր է դիտել քու փառդ,
Զիթենեաց լեռնէն». (Migne, P. G. 87, 3812)։ Այս խորհրդալից
տողերը պայծառօրէն կը հաստատեն թէ՛ Ս. Քաղաքի գեղեցկու-
թիւններն և թէ՛ Աշակերտարանի եկեղեցւոյն ներքին կառուց-
ուածքը։

Բլուրը

Այս եկեղեցւոյն նկատմամբ մեր պատմիչներէն Մովսէս Կա-
ղանկայտուացին կը գրէ իր հետևեալ խիստ շահեկան տեղեկու-
թիւններն. «. . . իսկ ի տեղւոջ Համբարձմանն՝ ըստ յարութեան
եկեղեցւոյն ձևոյ գեղեցկահիւս՝ գմբէթաձև շինուած է, հարիւր
կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն, անտի երևի Յորդանան
գետ և Հովր լեառն և բաղում գաւառք». (Պտմ. Աղուց. Աշխարհի.,
էջ 226)։ Աւելի վճիտ կերպով կը նկարագրէ Եպիփան վանականը.
«Համբարձման եկեղեցին ունէր չրջանակաձև սիւնաշարք մը,
մէջտեղը սեղան մը, սիւներէն դուրս կը գտնուէր մարմարիոնէ
սալարկուած բոլորշի սրահ մը, սիւնաշարքին արևելեան կողմը,
քիչ մը հեռի, կար կողակը՝ ուր մասնաւոր սեղանի մը վրայ,
Համբարձման տօնին կը պատարագէր պատրիարքը». (Migne, P.
G. 120)։ Ըստ Յերոնիմոսի, Բլրի եկեղեցին բոլորաշէն էր, (ro-
tonde), շուրջանակի ծածկուած սրահներով։ 670 ին, Arculfe ե-
պիսկոպոս՝ իր ի Պաղեստին ուղևորութեան ժամանակ, գծած է
եկեղեցւոյն յատակագիծը և հաղորդած մանրամասն տեղեկու-
թիւններ, որոնց համաձայն, կը տեսնուի թէ եկեղեցւոյն ամենէն
արտաքին սրահը կը գտնուէր նոյն բոլորաշէն եկեղեցւոյն պա-
տին յեցած քառակուսի սիւներուն (pilastres) մէջ։ Ուրիշ ուղևոր
մը, Willibalde կը գրէ թէ եկեղեցւոյն հիւսիսային և հարաւային
կողմերը կը գտնուէին երկու սիւներ՝ ի յիշատակ սպիտակազգեստ
այն երկու մարդոց, որ աշակերտաց կ'ըսէին «Արք Գաղիլիացիք»
Եայլն (Գործք Առքց. Ա. 10–11)։ Դարձեալ վերոգրեալներէն
Arculfe եպիսկոպոս և Եպիփան այս եկեղեցւոյն ներքին կառուց-
ուածքին վրայ կը հաղորդեն կարևոր տեղեկութիւններ։ Շէնքը
տանիք ու կամար չէ ունեցած, կատարելապէս բացօթեայ էր,
ամենուն նայուածքին տեսանելի ընելու համար երկնից ճանա-